

գտնում, Հատերը ցանկանում են, որ «Տարազը» օրաթերթի վերափոխումի Միացնում ենք մեր ձայնը Հատերի ձայնին և ցանկանում, որ օր առաջ իրագործուի Հասարակութեան ցանկութիւնը:

Մաղթում ենք «Տարազին» կատարեալ յաջողութիւն:

«Бакинскія Извѣстія»-ն «ԼՈՒՄԱՅ»-ի ՄԱՍԻՆ

«Լուսայ» (իններորդ տարի), երկամսեայ Հանդէս. պատմական, տեղագրական, գրական, հնագիտական, լեզուաբանական և նոյն իսկ գիտական նորութիւններ տուող զանազան յօդուածների ժողովածու: Հանդիսի խմբագրութիւնը յաւակնութիւն էլ չունի իւր հրատարակութիւնը պարբերական թերթ դարձնելու, թէև երբեմն-երբեմն տեղ է տալիս ժամանակակից անցքերի և տեսութիւնների: Ահա այս տեսակէտից և մենք կհօսենք նորա մասին:

Ընդհանրապէս առած «Լուսայի» յօդուածներն ու գիտութիւնները Հատ աւելի բազմազան, հետաքրքրական և աւելի տաղանդաւոր են գրուած, քան «Մուրճ»ինը: Եւ դա՛ հասկանալի է. «Լուսայի» աշխատակիցները աւելի փորձառու և գիտակ գրական աշխատաւորներ են, և գրում են իրենց Հատ յաւ ծանօթ նիւթի մասին: Կան մի քանիսը, որ հայ գրականութեան մէջ խոշոր անուն ունին:

Հանդէսն սկսւում է Գամառ-Քաթիպայի (Պատկանեան) մի սիրուն (որ կարծեմ առաջին անգամն է հրատարակւում) երգիծաբանական ոտանաւորով: Նշանաւոր բանաստեղծի մտրակըն այս անգամ խրապանում է մեր ժամանակի սունկի պէս բւանող պարագորդ և մեղկ լոսկէ երիտասարդութիւնը, իւր նորոյթ (МОДНЫЙ) սանրուածքով, գեղեցիկ Հարժուածներով ու ձևերով, նժոյգներ ձանաչելու անվրէպ ճաշակով, որկրամոլութեան և դերասանուհիների նուրբ քմքով: Պարագորդ կեանք անցնելով բէֆերի, խաղաթղթի և կամ անբարոյականութեան գրկում, այդ «երիտասարդութիւնը» վերջ ի վերջոյ ոչ մի երջանկութիւն չէ խոստանում ոչ իրեն և ոչ Հրճապատող հասարակութեան ու ժողովրդին: Ահա այս մասին է վշտանում բանաստեղծը:

Թողուածներից աչքի է ընկնում բժ. Լ. Տիգրանեանի «Դօրբատի համայսարանը և հայ-ուսանողները»: Բանն այն է, որ Դօրբատի նախկին գերմանական համայսարանը ահագին աղդեցութիւն է ունեցել հայ հասարակութեան վրայ: Հայ գրագէտներից, բանաստեղծներից, գիտնականներից և հասարակական գործիչներից ամենից աւելի ականաւորները—Դօրպատի նախկին ուսանողներ են: Նորա իրենց հասարակական և գրական գործնէութեան մէջ մտքրել են գերմանական հետեղականութիւն:

նը և բնական ոգին, Բաւական է մի քանի անուն թուենք, որ մեզ համար հասկանալի լինի գիտութեան և կրթութեան պէտք ընդհանուր նշանակութիւնը հայերի նկատմամբ Առաջին տեղը բռնում է Արտիկանը, հայ գեղեցիկ-գրականութեան հայրը, որ 1829 թուականին, բոլորովին պատահական կերպով Գորբատի համալսարանն ընկաւ Համալսարանի առաջին պրօփէսորի (հերձի) և նոյն համալսարանի առաջին կանոնադրութեան¹⁾ հեղինակի, բնագիտութեան ուսուցչապետ Քրիզրիս Պարօտի անմիջական-անձնական հսկողութեան տականցան 25 տարեկան երիտասարդի ուսանողական տարիները, Հինգ տարուց Արտիկանը հայրենիք վերադարձաւ զինուած զետութեամբ և հաստատուն գիտաւորութեամբ՝ զործել յօգուտ իւր ազգի վերածնութեան զործիւ, նորա ջանքերը կատարեալ յաջողութիւն ունեցան՝ նորան է պատկանում, ինչպէս ասացի, մեր գեղապարտութեան հիմնադրի և գրական լեզուի նախահօր պատիւը:

Գորպատում են կրթուել նոյնպէս, — Լազանի համալսարանի և Լազարեան ճեմարանի ապագայ ուսուցչապետ Մաեփանոս Նազարեանը, որ 60-ական թուականներին Մաեփոյում հրատարակեց «Հիւսիսափայլ»ը. — Աղափրիեան, յետոյ արքեպիսկոպոս, հոգեւոր հոգեւոր և գրող (Աստուածաբանական բաժնից), — բանաստեղծ Գամառ-Բաթիպա, հայագէտ, Ս. Պ. Պ. համալսարանի ուսուցչապետ Բերովբէ Պատկանեան, Սիմոնեան, որ 30 տ. խմբագրում էր Թիֆլիսում հրատարակուող «Մեղու-Հայաստանի» և շատ շատերը, Յօդուածը դեռ ևս չէ վերջացած և մենք դեռ ևս կգտնենք դորան:

Այս տարի ուսուցչապետ Մառը մի ծանապարհորդութիւն կատարեց գէպի Երուսաղէմ ուսումնասիրելու վանքում եղած հայ և վրացի ձեռագիրները: Կովկասի հնութիւնների անխոնջ աշխատաւորին յաջողեց բաւականաչափ նորութիւններ ժողովել հայ և վիրական գրականութեան հնագոյն շրջանի վերաբերութեամբ: Այդ աշխատութիւնները և բնութիւնները կարող են նոր լոյս սփռել Մովսէս Խորենացու, Աղաթանգեղոսի և այլ հեղինակների վրայ: Պ. Մառի այս բնագաւառութեան մասին մանրամասն տեղեկութիւն է տալիս հանդիսի մշտական աշխատակից և մատենախօսական տեսութիւն կազմող Պ. Բրիչը:

Բայց հանդիսի մանրակրկիտ յօդուածն է Պ. Ե. Շահաղիյի բանաստեղծ Գալֆայեան արքեպիսկոպոսի (Փրանսիական շառնախիւնների) Լամարտինի, Հիւզօյի և այլն թարգմանիչ) մենագրութիւնը: Եօդուածը դեռ ևս չէ աւարտած: Հետաքրքրական է նաև Պ. Բաթբերունու (բժիշկ) 1877 թ. ուսումնական պատերազմի յիշողութիւնները: Հեղինակը նկարագրում է իւր Երգրումի ծանապարհորդութիւնը (հենց նոր նուաճած Կարսի վը-

1) Գոյութիւն ունէր միայն մինչև 1892 թ.

րայով) և վերագործը, որ կատարում էր Վովկասի բժշկական վարչութեան յանձնարարութեամբ: Այդ նկարագրութեան մէջ երևում է շատ մեծ նկատելիւ ընդունակութիւն, սուր գիտողութիւններ զանազան բնատրութիւնների և հետաքրքրաշարժ աղագորական և հնագիտական տեղեկութիւններ 1)»

«Լուամայ»ի մէջ իբր յաւելուած տրւում է Տուրգենևի «Հայրեր և որդիներ» վէպը և Ռուսոյի «Էմիլը», իսկ հանդիսի մէջ տպագրւում է Փուլդայի «Հերոստրատ» ողբերգութեան չափածոյ թարգմանութիւնը:

Առհասարակ «Լուաման» տալիս է յուրջ և բնութեցանութեան համար կատարելագէտ մատչելի նիւթ՝ թէ ինքնուրոյն և թէ թարգմանական: Երկու հայ հանդէսներն էլ սիրով տրպագրում են ժամանակակից ողես գրողների՝ Չեխովի, Գոյրկու, Անդրէեի, Տոլստոյի և այլն թարգմանութիւնները:

«ԼՈՒՄԱՅ» ՆՈՒԻՐՈՂՆԵՐ

1. Մեծ. պ. Շիկողայոս Բայսողոլեանցը 2 օրինակ «Լուամայ» ստորագրուելով 1904 թ. մի օրինակը թողել է խմբագրութեանս տնօրինութեան ի յիշատակ իւր հանգ. ծնողի: Որոշեցինք ուղարկել Վաղիկականագի հասարակական գրադարանին:

2. Սիմֆէրոպոլից մեծ. պ. Միքայէլ Ալեանակին ստորագրուելով 1904 թ. 2 օր. «Լուամայ», մի օրինակը նուիրում է Արմեանակի հայոց ղալոցին նորոգ հանգուցեալ տիկին Շոխսաբեղ Ալեանակիի յիշատակին պսակի փոխարէն:

Հետևեալ համարից սկսած կսկսենք տրպել «Լուամայ»-ում մեր աշխատակից պ. Մուրացանի նոր պատմական վէպը «ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻ»:

1) Յիշողութիւնների հեղինակը, որի գրական գործունէութիւնը սկսւում է 60-ական թուերից, յայտնի է որպէս ապագորական, տեղագորական և ժողովրդի նիստ ու կաց նկարագրող, ժողովրդական երգերի, հէքիաթների, առածների և այլն ժողովող: